



ՀՈԳՇ. Տ. ՆՈՐԱՅՐ ԱՐԼ. ԳԱԶԱԶԵԱՆ

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

Հոգշ. Տ. Նորայր Արեղայ Գազազեան, աւագանի անունով Հայկ, ծնած է Պէյրութ 1977ին: Զաւակն է Անքուման եւ Սիրարփի Գազազեաններու: Նախնական ուսումը ստացած է Վահան Թէֆէեան վարժարանին մէջ, Պէյրութ:

1989ին ընդունուած է ուսանող Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Ալէքս եւ Մարի Մանուկեան ժառանգաւորաց վարժարանը, որուն ընթացքը աւարտելէ ետք, 1993ին, կը շարունակէ ընծայարանի քաժինը: 1994ին կը ձեռնադրուի սարկաւագ ձեռամբ Ամեն. Պատրիարք Տ. Թորգոմ Արք. Մանուկեանի: 1997ին կ'աւարտէ ընծայարանի քաժինը ու կը սկսի հետեւիլ Երուսաղէմի Երրայական համալսարանի Հայագիտութեան ճիւղին:

Այժմ կը շարունակէ իր ուսումը վերոյիշեալ համալսարանին մէջ: Պատրիարք Սրբազան Հօր կարգադրութեամբ պիտի հետեւի գրադարանավարութեան ուսումնաճիւղին:

6 Օգոստոս 2000ին, Քրիստոսի Այլակերպութեան Տօնին, կուսակրօն ֆահանայ կը ձեռնադրուի, ձեռամբ Ամեն. Պատրիարք Սրբազան Հօր: